

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Քաղմ. 1922 էջ 80)

Ը.

**Ս**ԵՐԱՍՏՈՑ Յովնան Եպիսկոպոսին նկատմամբ արդէն բաւական տեղեկութիւններ տուած են մեզ Մխիթարայ հին և նոր կենսագիրները: Առանձին զլուփ մ'ալ կը գտնենք Հ. Գ. Գալմբեարեանի «Կենսագրութիւններ Երկու Հայ Փատրիարքներու և Տասն Եպիսկոպոսներու և ժամանակին Հայ կարողիկեայք» անուն հատորիկին մէջ, ուր ժամանակագրական կարգաւ կը յիշատակուին Յովնանու կենաց և գործոց զխաւոր կէտերը՝ ընտիր ուսումնասիրութեամբ մը: Մեր հոս ներկայացուցած նամակը ունի փոքրիկ նորութիւն մը սա տեսակէտով, որ մինչ Հ. Գալմբեարեան կը գրէ որ այս միջոցն (այսինքն անոր առաջելութեան շրջանէն) միայն ծանօթ է որ 1706<sup>ն</sup> Սպառնայէն 58 դանկան ողորմութիւն դրկած է յբարտ Աբրահոն, Յովնան Եպս.ի ինքնագիր թղթէն կ'իմանանք, ի մէջ ուրիշ տեղեկութեանց, որ Հոովմէն առ Մխիթար զրկեր է նաև ողորմութիւն 1717ին « տասն և միև տօպի և կես և ք (երկու) սիվիլա »:

Վերապատելի տեղ Մխիթարի Ապրայի և Ածարանոտեան վրդպտի.

Զգիր Վերապատելութե քո զգրեալն ի յօտսի իք. ընկալայ ի սպտմբրի ա. որով ծանեա զողորմութիւն այն հրկւոր գոլ այժմ յղելն առ Վերապատելութիդ. և յոյժ ուրախ եղէ ազդ աննելն իմ զնա փութով, նա ևս զրեալ էիր թէ լաւ է փօստիւ ուղարկել, զի է սիկուռ, ահաւասիկ, տասն և մին տօպի և կէս և ք սիվիլիայ, եղի ներ փոքրիկ զուդին ներ պահարանի կնքեալ. և ի վերան գրեալ է. հասցէ ի ձեռն Մխիթար ապրային, մերձ ի տան մարթին, ի Վէնէտիկ, և ունի նշան զայս շխշ: Իբրև ընդունեցիս զնա ամբողջ, յիշեցես զմեզ ի յաղօթս. և հայցիցես ի տնէ վս մեր, պարզեալ մեզ զչնորհ իւր սք երկիւղի ի սիրոյ, որ է յոյժ հրկւոր: Եւ զու լիջիր ողջ ընդ յամերամ ժմկս, ի բարձրութիւն սբյ եկզցւ, ի պայծառութիւն ազգի. և ցնծութի սրտից մերոց. քիւ սք ամէն: Զլուրն այն աւետեաց զոր գրեալ էիր, այսինքն, զխրտկաւմ տեկց, զկանգնուամ սբյ խաչին ի հրապարակին Պէլէկանուռ, և զբարձրացումս սբյ եկզցւյն կթղկի, կարի յոյժ հաճոյական ցնծութի էր սրտից մերոց, և իբրաի, զի զեղեցիկ և վայելուչ է ստէպ կրկնելն զցանկալի յաղթութիս այս, առ ունկս փափաքողաց, սակս որոյ բիր զոհութիս

և շնորհակալութիւն պարտիւք մատուցանել այ, որ պարզեաց զուրախութիւն այս մեծ. մայրն իմ և եղբայրն իմ քո հրամանաց աջն համբուրելով ողջոյն տան, եղիայ վրդպտի և այլոց եղբրցն իմոց ընդ հովանեալ թևոյ քոյ եղևոցն ողջոյն տամ սիրով

գրցւ 1717 ի սպտեմբրի գ. ի թաղն Վերապատուելութե քում նուատազունեղ ծոյ սանթ օնօֆրիոյ ի Հոռոմ Յունան Եպս. Սեպստիոյ

Մեր թարգման դալադացի տր յակոբի եղբորորդի յարութին եկն ի Հոռոմ. կամէր տօմէնիկանի կարգն մտանել, որ թէպէտ ընկալան, սակայն ինքն ոչ հաճեցաւ ասելով, թէ ես կամիմ պտրզիւ լինիլ. չք պատճառեցին զքերկնութի չզիտնեալն. սակս որոյ հրճբա ի նոցանէն. արդ կամի գալ ի Վէնէտիկ. ես կամէի ընդունել զնա, բայց երկեալ, մի՛ գուցէ խոռովութի լիցի պատճառ այսու ի մէջ իմ և եղեսպցուն: Ծանկիր քս. որ մէջն եղեալ գիրն խնդրեմ որ փութով հւտրմ անձի հետ յղիցես ի ձեռն պատրի վէրծօյին կամ ընկերի նորին. ողջ լեր:

Թ.

Բարգոռուղիմէնոս վարդապետ այս առաջին նամակով կը սկսի թղթակցութեան մտնել Միխիթարայ հետ: Աւելի կը հրատարակենք զայս՝ գրութեան ձևին համար որ՝ եզականութիւն մ'ունի:

Առ Հռուսկարոյ և գերապատուելոյ տեառն Միխիթար վարդապետի և Վանապետի Անդրադարձականն սիրոյ և հաղորդակցութեանն եկեալ ձօնեցի ողջոյն

Առաքինասէր վարդապետութիւն և բարեկրօն Վանապետութիւն քո, թէպէտ ի տե. սութենէ զգայականի ոչ էր ինձ երբէք պատկեր առ պատկեր ծանօթացեալ, թէ և կարօտիւ ախորժականաւ ի վաղուց հետէ ակնաստես նորա լինիլ, և ընդ նովմիբ հոգևորապէս խրախճանալ մերթ առ մերթ փափաքիցէի, սակայն ի համբաւունակ հռչակմանէ ի ձե. ըայնոց վարուց բարեկրօնից, ի պտղոց քոց վաղահասից ի վերայ անդիտապտոյտ արմա. տոյն առաքինութեան և զիտութեան պատուաստեցելոց, ի յաշնատանաց քոց յարատե. ցելոց, որք ի ուղղութիւն նկրտին ազգին մերոյ, ի հոգեշահից գրեանցն Ապրիլի ի քէն մեծաւ ջանիւ կերպաւորեցելոց, նոյն ինքն լեալ էր ինձ արդէն իսկ յայտնի, և մանա. ւանդ ի քաղցրաբարբառոյ տրամբարնութենէ ներկայականիս, զոր ի յորքտասան ընթա. ցելոյն ձեռնամուխ լեալ ժառանգեցի, նորում Վաղնշականի բարեկամութեան, անստգա. տելի Վարդապետութեան, անբամբասելի մեծաւորութեան, ամբասիրի Վերակացութեան, և սիրալրականի Վանապետութեան քո, և բնաւից քոյոց կրկնակարբար եղէ վերահասու: Ուստի թողով զարտաքին արարողութիւնն, վանապետական գերապատուելութիւն քո, զոր ի ներքնայնոյ համբարանէ սրտի իմոյ սիրեալ էի, և նոյնոյ իւրայնօքն հանդերձ իսկոյն սիրահարեալ սիրահարիմ, իրազեկ լեալ, խելամուտ լիցի հաւատեալ, զի զոր ինչ լուեալ է՝ զինէն, այն ամենայն ճանաչի եկեալ ի բազմազեղից շնորհացն ուրոյն սրբոյ, որ ըստ հաղորդակցականի բարութեան իւրոյ ուր կամի աննախանձ շնչէ, և բաշխէ առատապէս զգանձս անհոսիլի իմաստութեան անձանձրիւ երկայնմտութեամբ հայցողաց: Վասն որոյ այն ամենայն եկեալ ի պարզեաց ուրոյն սրբոյ ի պատիւ երանցելոյ կուտին

ի վայելութիւն վեճաբարձրութեանց սրբոյ ժողովին, և ի համբաւ արամեան ազգին առնչացաւ, մինչ զի աժմոյս ձեր սիրելութեան այլ ոչինչ թաց, եթէ ոչ ես իմովս բոլորովիմք. որ թէպէտ ի մեծէն հոսմայ այդր զալ կամ եղև ինձ արորժանօք և բազմից և ընդ ձեռք հաղորդակցիլ բանիւ Տեան, և զանդրադարձական կարօտութեան փափաքն համարտանալ, սակայն, կամք տեսոն օրհնեալ եղիցի, վասն բազմից պատճառաց և մանաւանդ վասն ծանտութեան բեռին իմոյ, որոյ խարճն շատ էր և պատշաճաւորի նաւին, որոյ այդր գտանելն աներկբայ ոչ լինէր, հարկ հղև հրամանաւ մեծաւորաց աստի անցանել. բայց աստ ևս մինչև ցայս վայր արգիւեալ թացի, զվաղճան սորա տեսցուք ի բարին: Չբազում զեկուցումն կարէի գերապատուելութեան քո աստի ծանուցանել, բայց զիտեմ, որ յեղբօրէն մերմէ թէ ոչ է տեղեկացեալ, կարող է մտերիմ լինիլ, զի ես նմա, ասեմ Խաչատուր Աստուածաբանութեան և արգապետին մի ըստ միողջ ծանուցեալ եմ: Տէր Էմանուէլն աստ եկեալ էհաս, որ է՝ բազմամամանակայ բարեկամ և առաջին խոստովանահայր իմ, և ինձ յոյժ սիրելի, սակայն, աւաղ խառնակ ժամանակիս, ոչ կարեմ նմա ըստ ըզձանաց իմոց ձեռնտու լինիլ, բայց հոգեորապէս ոչ պակասիմ ըստ կարեաց իմոց մինչև անցէ բարկութիւն Տեան. ես ամենևին ձեր եմ: Անձաւ սիրով ողջոյն ընձեռեմ բնաւից միաբանութեան քո իջբարց ճանաչողաց, և զիս անճանաչողաց և մանաւանդ քաղաքակցաց իմոց: Դարձեալ որդիականաւ սիրով և կարօտիւ զբազմազան ողջոյն մատուցանեմ գերապայծառութեան Հօր իմոյ Արութիւն Եպիսկոպոսին: Արդ հայցեալ ի Յիսուսէն իմմէ վանապետականի վերապատուելութեան քո զամենայն առողջութիւն և խոհեմական արիութիւն, և յանձն արարեալ զիս բարեկրօնից աղօթից և սրբազանից պատարագաց քոց, և քոյոցն քրկախառն համբուրիւ թամ պարուանտեալ ամենայնի:

Վանապետականի գերապատուելութեան քո

Ի Արևիզոնա թուին Փրկչին  
1717 յոկտեմբերի 15 ի տան  
պարոն ուռուստամի

Անպիտան ծառայ Բարդուղիմէոս  
Վարդապետ յերկրէն Եւզոկիոյ անարժան  
Կուրբակ Առաքելական

(Շարունակելի)

Հ. Պ. ՏՄԵՆԱՆ

**ԲԱԶՄԱՎԷՊԻ ՅՍԻԵԼՈՒԱԾԸ**

« Բազմավկայ » ի ներկայ թուոյն հետ, ինչպէս խոստացեր էինք, կը դրկենք մեր բաժանորդներուն Ուիտիս բարեյիշատակ Արճի Գերպ. Իզն. կիւրեղեան Արբահօր մաւ հուան առթիւ նոր լոյս տեսած պատկերազարդ Յաւելուածը:

Արդ ի գիտութիւն կը ծանուցանենք այն ամենուն, որոնք կ'ուզեն ամբողջականունենալ Բազմավկայի հաւաքագրութեամբ տոյն պրակը՝ որքան որ անշատ լոյս կը տեսնէ, սակայն մաս կը կազմէ Բազմ. յոյժուարի թուոյն:

